

Ենթահաջորդականություն

Տրված է N հատ բնական թվերի հաջորդականություն, որոնք չեն գերազանցում 10000 -ը և բնական S թիվը: Գրեք ծրագիր, որը գտնի հաջորդականության մինիմալ երկարությամբ անընդհատ ենթահաջորդականության երկարությունը, որի տարրերի գումարը մեծ է կամ հավասար S -ից:

Մուտքը

Մուտքի առաջին տողում տրված են N ($10 < N < 100\ 000$) և S ($S < 100\ 000\ 000$) թվերը: Երկրորդ տողում տրված են հաջորդականությունը կազմող N բնական թվերը:

Ելքը

Ելքում հարկավոր է արտածել գտնված ենթահաջորդականության երկարությունը:

Օրինակ

Մուտքը.

9 15

6 1 3 5 10 7 4 9 2

Ելքը.

2